

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԼՈՒՍԱՐՈՒԺՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԵՂԱՆՈՎ: Վերջին ժամանակներս ֆրանսիացի Բրոկա և Ալֆրէդ Շատէն բժիշկները ըսկըսել են լուպուսի բժշկութեան ժամանակ գործածել նոր տեսակի ելեքտրական գործիքներ: Այդ գործիքների մէջ ածուխէ կամարների տեղ շինուած են երկաթէ կամարներ, որովհետեւ երկաթէ ելեկտրասայրերը աւելի հարուստ են ածուխէ ելեկտրասայրերից, մանիշակագոյն և խիստ-մանիշակագոյն ճաճանչերով. իսկ այդ ճառագայթները լուպուսի բուժման ժամանակ առաջնակարգ նշանակութիւն ունին:

Մի շարք փորձերից յետոյ Շատէն և Նիկոլսոն հաստատեցին, որ երկաթէ կամարը, պարունակելով իր մէջ մեծ քանակութեամբ քիմիական ճաճանչներ, վերին տատիճանի քայքայիչ կերպով է ազդում բակտերիաների վրայ. այդ պատճառով հնարաւոր է դառնում գործածելու շատ աւելի պակաս ոյժ ունեցող լամպաներ, քան այն ժամանակ, երբ գործ են ածում ածուխէ կամարները: Նոր տեսակի գործիքներում շատ քիչ տաքութիւն է առաջանում, իսկ ճառագայթների ազդեցութիւնը աւելի բարձրանում է. այդ պատճառով Բրոկի և Շատէնի գործիքները եթէ մօտեցնենք հիւանդի զլխին, բոլորովին չեն տաքացնում նրա հիւսուածքները:

Բրոկան և Շատէն հաւատացնում են, որ իրանց գործիքի ճաճանչները շատ լաւ թափանցում են հիւսուածքների մէջ. բայց պէտք է ասել, որ դանիացի յայտնի պրոֆեսսոր Ֆինզենը չի համաձայնում վերեւ ասուածի հետ: Ֆինզենի ասելով, լուսաբուժութեան զլխաւոր պայմանը պէտք է կայանայ նրա մէջ, որպէսզի օգտուենք այն գործիքներով, որոնք տալիս են ամենաուժեղ կապոյտ գոյն, իսկ դորա համար անհրաժեշտ է վերցնել 60—80 ամպիերան ոյժ ունեցող լամպ ածուխէ կամարներով: Իսկ մետաղեայ ելեկտրասայրերը բոլորովին անպէտք:

են, որովհետև նրանք թէպէտ և առաջացնում են մեծ քանակութեամբ խիստ մանիշակագոյն ճառագայթներ, բայց չեն տալիս թափանցող ճառագայթներ:

Յետագայ փորձերը ցոյց կտան ի հարկէ, թէ երկու ենթադրութիւններից որն է ճշմարիտը:

ՐԱԴԻՅԻԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԽԼԻՐԴԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԻՆ: Կոկորդի խլիրդային հիւանդութիւնը ամենաւարձաւիքի հիւանդութիւններին է պատկանում, որովհետև հիւանդները այդ հիւանդութեան ժամանակ սովամահ են լինում: Տարածւող վնասարեւր ուռոյցքներից կոկորդի անցքը հետզհետէ կուչ է գալիս. հիւանդը կարող է կուլ տալ նախ միայն փափուկ կերակուր, յետոյ ջրալի, և վերջապէս հասնում է այն բոլէն, երբ հիւանդը այլևս չէ կարողանում կերակուր ընդունել: Այլատուում են ամեն կերպ դորտ առաջն առնել. հիւանդներին վերահատուցեան են ենթարկում. կտրում են ստամոքսը և միջից խողովակ անցկացնում, որի միջոցով և կատարւում է կերակրումը: Այդ վերահատուցիւնը շատ վտանգաւոր է և շատ քչերն են համաձայնում ենթարկուել նրան: Առհասարակ բժիշկները դիմում են զննաձողին (ЗОНДЪ). կոկորդում անց են կացնում զանազան հաստութեան զննաձող և այդպիսով արգելք են լինում կոկորդի սեղմուելուն երկար ամիսների ընթացքում, մինչև որ վնասարեւր ուռոյցքները չեն խոցոտուում և հիւանդը չէ մեռնում չարատանջ մահով:

Վերջին ամիսների ընթացքում ֆրանսիացի և դերմանացի դիտնականները հետաքրքիր յայտնութիւններ արին: Նըրանք գտան որ՝ կաշուի, շրթուքների, քթի և ուրիշ սարկոմաները քչանում են Բադդիի ճառագայթների ազդեցութիւնից: Վանանց կրծքի կարցինոման նոյն ճառագայթների ազդեցութիւնից քայքայւում է և ուռոյցքների մէջ անցքեր են դոյանում:

Վիէնայի վիրաբուժական հիւանդանոցի բժիշկ Էկաները, բժիշկ Սօկոլովսկու ասելով, մտածեց կոկորդի խլիրդը բժշկել Բադդիով:

Մի հասարակ գործիքի օգնութեամբ նա Բադդին (պարունակուած մի կապսիւլի մէջ) ամրացրեց միջին հաստութեան մի վիրաչափին և այդ վիրաչափը անցկացրեց հիւանդի կոկորդի միջով. Բժիշկ Էկաները հիմնուելով իր կատարած երեք փորձերի վրայ ապացուցանում է հետևեալը. զննաձողը երկու արաթուայ ընթացքում անց են կացրել կոկորդի միջով եօթն

անգամ. ամեն անգամ թողնում էին մէջը զանազան բարձրութեան վրայ $\frac{1}{2}$ ժամուայ չափ. դրանից յետոյ բժիշկ Էկսները կարող էր ազատ կերպով անց կացնել աւելի հաստ վերաչափ. իսկ աւելի ուշ, կոկորդը աւելի լայնացաւ և հիւանդները հեշտութեամբ կարողանում էին կուլ տալ չոր կերակուրը:

Սրանից հեշտ է եզրակացնել, որ Բադդիի ճառագայթների ազդեցութիւնից, որոնք ներգործում էին կոկորդի ուռոյցքների վրայ, այդ ուռոյցքները քայքայւում էին և քչանում:

Եթէ այս եզրակացութիւնը կը ճշտուի, մարդկութիւնը, ինչպէս ասում է բժիշկ Սօկօլօսիկին, կը հարստանայ մի նոր գէնքով սարսափելի հիւանդութեան դէմ, որ ահագին զոհեր է տանում:

Բժիշկ Էկսները շատ քիչ Բադդի ունի (60 միլլիգրամ) այնպէս որ նա կարող է գործածել միայն մի հաստութեան զննածոյ: Բադդիի նոր քանակութիւն ձեռք բերելուց յետոյ՝ նա կը բազմացնի իր փորձերը և հետազոտութիւնները:

ԹԻՖԼԻՍԻ ԷԼԻ ՆՈՐ ԻՆՂ. «Borsen Courrer»-ը հաղորդում է թղթերի թրջախտի դէմ եղած մի նոր գիւտի մասին, որ գտել է Պադեր-Բորնում Դենցեն քիմիկոսը:

Այդ միջոցը կոչւում է «Hezesintactes Natio—Clycogen» և նրա առողջարար յատկութիւնը բացատրւում է հետեւալ կերպով. թրջախտը կարելի է բժշկել միայն այն ժամանակ, երբ կը լաւանան այդ հիւանդութիւնով վնասուած տեղերը: Վնասուած տեղերի լաւանալը պայմանաւորուած է նոր ցանցերի առաջանալով, իսկ նոր ցանցեր կարող են առաջանալ միայն այն ժամանակ, երբ մարդու կազմուածքի մէջ բաւականաչափ գլիկօգէն կայ:

Բոլոր արագ աճող գործարանները պարունակում են իրանց մէջ մեծ քանակութեամբ գլիկօգէն: Այն ժամանակ, երբ առողջ երիտասարդի կազմուածքի մէջ կայ 300 գրամ գլիկօգէն, թղթերի հիւանդութիւն ունեցողների կազմուածքի մէջ շատ քիչ կը գտնուի այդ նիւթից. թրջախտը ոչնչացնում է գլիկօգէնը և ուրեմն ամենից առաջ պէտք է աշխատել գլիկօգէն մտցնել թղթերի մէջ: Գլիկօգէն ընդունելով, հիւանդը ոչ թէ դեղ է ընդունում, այլ նրա կազմուածքին պակասող սնունդարար միջոցը. Դենցեի նոր հնարած գիւտը, բժիշկների ասելով, հետեւալ ազդեցութիւնն է ունենում. վեց չաբաթից յետոյ հազը, խորիս գալը դադարում են. դողի երևոյթները հե-

աղբհետէ թուանում են, ստամոքսը ամրանում է. գիշերուայ քրտինքը կորչում է, ախորժակը բացւում է և մարմինը չաղանում: Թերթի ասելով, շատ դէպքերում հիւանդը չափազանց շուտ էր կազդուրուել և մեծ մասամբ հիւանդները առողջացել են:

Գենցի գլիկօգէնը պատրաստւում է նկանակների ձևով. թեթև հիւանդները ընդունում են օրական 3—5 նկանակ, իսկ ծանր հիւանդները 1—2 հատ մի ժամուայ մէջ: Եղել են այնպիսի դէպքեր, երբ հիւանդները մի շաբաթուայ ընթացքում ընդունելով այդ դեղը, ոչ մի փոփոխութիւն չեն զգացել: այն ժամանակ նկանակի լուծուածքը սրսկում էին կաշուի տակ և դորանից յետոյ շարունակում ընդունել: այդ բանը բացատրւում է ստամոքսի խանգարումով. սրսկումը մարդու կազմուածքը ընդունակ է դարձում գլիկօգէնը ընդունելու և իւրացնելու:

ԾՈՒՎԻ ՅԱՏԱԿԸ ՏԵՍԱՆՆԵԼԻ. Անգլիացի օգաչու Բակօնը մի շատ կարևոր գիտ է արել: Բարձրից սննցնելով խաղաղական ովկիանոսի վայով, նա տեսաւ որ ծովի յատակը պարզ երևում է: Այս բանը հաստատելու համար Բակօնը անգլիական ծովագետութեան ներկայացրեց ծովային յատակի իւր հանած լուսանկարները: Եթէ այս գիտի հետագայ դիտողութիւնները լաւ հետևանքներ կունենան, այն ժամանակ օգաչուները մեծ դեր պիտի խաղան ոչ միայն ծովագնացութեան նկատմամբ այլ և ծովային պատերազմների ժամանակ—կարելի կլինի գրտնել թշնամու դրած ականները և ջրի տակի նաւերը:

ԻՆՉՊԷՍ ԿՈՌԻՆԷԼ ԾՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ. Կեանքի հիմքը կազմում է նիւթերի փոխանակութիւնը: Մէկը քայքայւում է, միւսը նորոգում: Պաշարով ապրել կարելի է միայն մի քանի ժամ. ուստի և գործարանական բջիջները միշտ պէտք է նորոգուին: Մարմինը մեծ ուժով է կազմակերպւում կեանքի նախնական ժամանակ: Ձուն չափազանց արագութեամբ է մեծանում կշռով և ծաւալով: Յղութեան սկզբում նա կշռում է $\frac{1}{1000}$ մսխալ, իսկ վերջում 8—10 գրով: Պտուղը երևալուց յետոյ յօրինման ոյժը սկսում է աստիճանաբար թուլանալ, աւելանում է քայքայման գործողութիւնը և այս ոյժերը հաւասարւում են:

Հասնում է այրական շրջանը, որ մեր խնդութեան ժամանակն է և այս տեսում է 20 տարի: Այնուհետև քայքայումն աւելանում է. երիկամները, փայծաղը և լեարդը պնդանում

են: Հիւսուածների պնդութիւնը հեշտ կարելի է նկատել վառեկի և ծեր աքաղաղի մսի վերայ:

Արեան չրջանառութիւնը ծերութեան հասակում չի կարող կանոնաւոր կատարուել: Սրաի պատերը հաստանում են, երակների պնդութիւնը սորան զրկում է օննւառութիւնից:

Այս բաժակը ոչոքից անցնել չի կարող: Պնդութիւնը դէպի կաթուած է տանում: Մեշնիկովը յոյս է տալիս ծերութեան դէմ կռուելու: Նորա ասելով, պէտք է միջոց գտնել մակրօֆագների դէմ, որոնք պնւացած գործարանները փոխում են միաւորիչ հիւսուածների, և այն ժամանակ ծերութիւնը հեռացրած կլինենք: Իսկ այս միջոցը՝ ցիտօտօկսին է, որ ստացւում է մարդու արիւնը կենդանուն՝ պատուաստելով, իսկ յետոյ այս պատուաստի շիճուկով պատուաստում ենք մարդուն:

Այս շիճուկը կարող է արագահաս մահ պատճառել, իսկ անշան քանակութեամբ՝ սակաւարիւն մարդուն դարձնում է լիարիւն: Նոյնը կարելի է անել և փայծաղի վերաբերութեամբ և այսպիսով մարդուն մաս առ մաս նորոգել: Մինչև Մէշնիկովի այս տեսութիւնը ամենալաւ տեսութիւնն այն էր, որ ամեն տեսակ վնասակար բանից հեռու պահէ մարդ իրան և չափաւոր լինի ամէն բանում. այն ժամանակ կարելի էր հասնել խորին ծերութեան:

Ծերութիւնը զարհուրելի է նորանով, որ նա զարգանում է նոյն թոյները, որոնք ստացւում են ալքօօլից, վատ հիւանդութիւնից և սնդկով թունաւորումից: Աղիքներում զլխաւորապէս բուն են դնում բակտէրիաներ, թուով մօտ 130 տրիլիօն: Նոքա զլխաւորապէս զարգանում են մսեղէն կերակրից և գոյացնում են կարբօմենեան թթուում՝ միսը քայքայող մի նիւթ: Բոլոր ծերերը, իրանց կենսագրութեան նայելով, զրպել են իրանց մսից և առհասարակ գործ են դրել խիստ փոքր քանակութեամբ կերակուր:

Ուրեմն պահեցողութիւնն ու Մէշնիկովի ցիտօտօկսինը ծերութեան դէմ կռուելու յաջող միջոցներ են. չպէտք է մոռանալ և առողջապահութիւնը:

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆԸ